
**Ջ. Գ. ԲԱՅՐՈՆԻ ԵՐԿԵՐԸ ՎԵՆԵՏԻԿԻ
ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ**

ԲԵՔԱՐՅԱՆ Ա. Ա.

Հայ մտավորականությունը շատ վաղ, սկսած դեռևս XIX դ. 10-20-ական թվականներից, ծանոթ է եղել անգլիացի մեծ բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնի (1788-1824) ստեղծագործություններին: Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի, Մոսկվայի, Թիֆլիսի, Վենետիկի և Վիեննայի մշակութային օջախներում լույս տեսնող բազմաթիվ պարբերականներում տեղ են գտել ինչպես հոդվածներ բանաստեղծի մասին, այնպես էլ թարգմանություններ նրա բանաստեղծություններից:

Սկսած 1840-ական թվականներից՝ Բայրոնի քնարերգությունը հայ մամուլում ձեռք է բերում առանձնակի հետաքրքրություն: Արագ թափով աճում է նրա ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների թիվը, որոնք սկզբում կատարվել են ֆրանսերենից, իսկ հետագայում՝ ավելի հաճախ՝ բնագրից: Հանդեսները տպագրում են հոդվածներ նրա մասին, ինչպես նաև թարգմանություններ նրա ստեղծագործություններից: Հայ իրականության մեջ հետաքրքրությունը Բայրոնի անհատականության, նրա գրական ժառանգության նկատմամբ պատահական երևույթ չէր, այլ պայմանավորված էր, մի կողմից, այն մեծ դերով, որ ուներ անգլիական մշակույթը (Շեքսպիր, Միլտոն, Սկոտ և ուրիշներ) հայ կյանքում, իսկ մյուս կողմից՝ հայ մտավորականության ներկայացուցիչների հասարակական և քաղաքական դժգոհությամբ, քանի որ Բայրոնի իտալական շրջանի բանաստեղծությունները նրանց մեջ արթնացնում էին ազատագրական ձգտումներ և պատասխանում նրանց հետաքրքրող հարցերին: Բայրոնի ստեղծագործությունների լայն արձագանքին հայ հասարակության մեջ նպաստեց նաև այն հանգամանքը, որ Բայրոնը 1816-1817 թթ. Վենետիկի Ս. Ղազար կղզում սովորել էր հայերեն, և Մխիթարյանները գրառումներ էին կատարել նրա մասին:

XVIII դարում հայ մշակույթը, շնորհիվ Մխիթար աբբահոր հիմնած հաստատության, վերելք է ապրում: XVIII դ. ընթացքում Վենետիկը դառնում է հայկական տպագրության կարևորագույն կենտրոն: Հայագիտական այդ կենտրոնը տարիներ շարունակ ավանդապահ է եղել մեր մշակույթին ու գրականությանը, ծանոթացրել դրանք քաղաքակիրթ աշխարհին: Մխիթարյանները «ոչ միայն ազատեցին մեր հին մատենագրությունը Հայաստանի վանքերի խորշերում փտելուց, այլև ընծայեցին մեզ թվով շատ ինքնուրույն և թարգմանական հեղինակություններ: Նոքա մի կողմից տարածեցին մեր հասարակության մեջ ընթերցասիրություն, ծանոթացրին եվրոպական գիտությունների հետ, մյուս կողմից,

հարստացրին յուրյանց վանքը»¹: Փաստորեն, «... մի դարի ընթացքում նրանց վանքը դարձավ ազգի մտավոր կենտրոն, հին Հայաստանի ուղեցույց աստղ, առաջնորդելով իրենց ազգին դեպի քաղաքակրթության արահետները»²:

Մխիթարյանների այդ տքնաջան ու բեղմնավոր գործունեությունն էլ առիթ դարձավ, որպեսզի Բայրոնը հետաքրքրվեր հայերով ու հայ մշակույթով: Ինչպես նշում է ռուս անվանի գրաքննադատ Յու. Վենետկովսկին (1872-1919), «Արևելյան այդ հին ժողովրդի կրոնը, գրականությունը, պատմությունը՝ այս ամենը, հետաքրքրեցին նրան (Բայրոնին - Բ. Ա.), իսկ կղզու բնակիչների հեզահամբույր, սրտաբաց վերաբերմունքը էլ ավելի կապեց նրան յուրատիպ գաղութին: Նա ավելի հաճախ, քան առաջ, սկսեց այցելել իր նոր ծանոթներին: Եվ մի անգամ չէ, որ դիմակահանդեսի ամենատեղում պահին, թեթև մակույկը տարել է նրան Ս. Ղազարի խաղաղ մենաստան: Ճիշտ է, այստեղ ամեն ինչ չափազանց հեռու էր կյանքից, բայց, իբրև հակադրություն վենետիկյան եռուզեռին, այս խաղաղությունն ու անդորրը ոչ միայն տհաճ չէին թվում, այլև երբեմն ուղղակիորեն բերկրանք էին պատճառում խոնջացած բանաստեղծին»³:

Անկասկած, եվրոպացի գրողներից Բայրոնն է, որ ամենից շատ անձնական առնչություն է ունեցել հայ իրականության հետ: Նա ծանոթացել է Մխիթարյանների հետ, բարձր է գնահատել նրանց կատարած հայրենանվեր աշխատանքը, ինչպես նաև սովորել է հայոց լեզուն և հետաքրքրվել հայ մշակույթով: Ինչպես հայտնի է, մինչ Մխիթարյանների հետ ծանոթանալը, Բայրոնին համակել էին հուսահատությունն ու թախիծը, ատելությունն իր հայրենիքի և անգլիացիների նկատմամբ: Իրենց հայրենիքից հեռու գտնվող, բայց հանուն հայրենիքի և ազգի, Իտալիայի այդ գողտրիկ անկյունում քրտնաջանորեն գործող հայ վանական-մտավորականները Բայրոնին ոչ միայն հայերեն էին սովորեցնում, այլև իրենց հոգատարությամբ ու վարվելակերպով ջանում էին բուժել բանաստեղծի սիրտն ու հոգին, նրան հաղորդել ստեղծագործական նոր լիցք և մղել նոր խիզախումների: Դժվար է ասել, թե ինչպիսին կլինեին Բայրոնի հետագա ստեղծագործական կյանքը, եթե նա չհանդիպեր Մխիթարյաններին: Բայրոնի մտքի բազմազանությունը և խորությունը, իրականությունը ճանաչելու նրա փիլիսոփայական որոնումները, առասպելի և իրականության միացումը, անկախության ձգտումը, մտքի հաղթանակը կապ ունեն Բայրոնի հայկական ուսումնասիրությունների հետ: Այդ մասին բազմիցս նշել են ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակները: Այսպես, ֆրանսիացի ռոմանտիկ բանաստեղծ, քաղաքական գործիչ, պատմաբան Ալֆոնս Մարի Լուի դը Լամարթինը (1790-1869) 1848-ին Փարիզի Մուրատյան վարժարանի աշակերտների մրցանակաբաշխության հանդեսի ժամանակ արտասանած ճառում նշում է. «Լորտ Պալլըն մեծ

¹ Բաֆֆի, *Երկերի ժողովածու*, տասը հատորով, հ. 9, Ե., 1958, էջ 88:

² Langlois V., *History of the Armenian Monastery of St. Lazarus-Venice* (trans. from French by Frederick Schröder), Venice, 1899, p. 21.

³ Веселовский Ю., *Очерки армянской литературы, истории и культуры*, Е., 1972, с. 393.

բանաստեղծն անգղիացի, եւ ուր որ ինքն այնչափ անգամ ամփոփեր ու լուսաւորեր էր իր գեղեցիկ երևակայութիւնը ձեր գրականութեան լուսովը»⁴:

Եվ պատահական չէ, որ Մխիթարյաններն առաջիններից էին, որ անդրադարձել են Բայրոնին ու նրա ստեղծագործությանը: Բայրոնի բազմաթիվ ստեղծագործություններ և նրա մասին հոդվածներ տեղ են գտել Մխիթարյանների հրատարակած գրքերում, ժողովածուներում և գրական հանդեսներում: Քննենք Վենետիկի Մխիթարյանների կողմից Բայրոնի երկերի հրատարակությունները (առանձին գրքերով ու ժողովածուներում, «Բազմավեպ», «Գեղունի» և «Հայ ընտանիք» հանդեսներում):

1. *Առանձին գրքերով ու ժողովածուներում*: 1817-ին Հարություն Ավգերյանը և Բայրոնը միացյալ ջանքերով պատրաստում և հրատարակում են *Անգլերեն-հայերեն քերականության* ձեռնարկ՝ հայերի օգտագործման համար, իսկ այնուհետև կազմում են անգլիախոս ուսանողության համար *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկը, որը հրատարակվում է 1819-ին: Այդ ձեռնարկը ճշգրտված և ավարտուն ձևով վերահրատարակվում է 1832-ին⁵, որի մեջ Հարություն Ավգերյանը որպէս հայոց լեզվի վարժություններ զուգահեռ գետեղում է նաև ս. Պողոսի՝ կորնթացիներին ողջված երկու թղթերը, Մ. Խորենացու *Հայոց պատմության* որոշ հատվածներ, մի հատված Ներսէս Լամբրոնացու *Ատենաբանությունից* և դրանց անգլերեն թարգմանությունները՝ կատարված Բայրոնի կողմից:

1852-ին լույս է տեսնում *Ծաղկաքաղ քերթողաց անգղիացւոց* ժողովածուն (անգլերեն և հայերեն)⁶, որտեղ, ի թիվս այլ ստեղծագործությունների, տեղ են գտնում նաև Բայրոնի որոշ ստեղծագործություններ: Այստեղ *Ի թղթոց Լորտ Պայրընի* խորագրի տակ ամփոփված են *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար բանաստեղծի գրած առաջաբանը և հատվածներ նրա երկու նամակներից, իսկ *Հատուածք Պատմութեանն Հայոց. թարգմանեալք ի Լորտ Պայրընէ ի հրահանգրս անձինն ի հայ բարբառ* խորագրի տակ բնագրի հետ միասին տեղ են գտել Մ. Խորենացու *Հայոց պատմության* որոշ հատվածների անգլերեն թարգմանություններ՝ կատարված բանաստեղծի կողմից: Ժողովածուում գետեղվել են նաև մի հատված Ներսէս Լամբրոնացու *Ատենաբանությունից*, ս. Պողոսի՝ կորնթացիներին ուղղված երկու թղթերը և դրանց անգլերեն թարգմանությունները, որոնք կատարել է Բայրոնը: Ժողովածուում *Լորտ Պայրընի Քերթուածք* խորագրով տեղ են գտել վեց բանաստեղծություն (բնագրով և հայերեն թարգմանությամբ)՝ *Կոտորած բանակին Սենեքերիբայ (The Destruction of Sennacherib)*, *Ուղերձ առ Ովկիանոս (Address to the Ocean)*, *Ի Վադերլու (On Waterloo)*, *Առ ժամանակ (To Time)*,

⁴ Մուրատեան վարժարանին պարզևաբաշխութիւնը (Բազմավեպ, 1848, N 23, էջ 357-358):

⁵ Paschal Aucher P., *A Grammar Armenian and English, Venice, of St. Lazarus, 1832.*

⁶ *Beauties of English Poets - Ծաղկաքաղ քերթողաց անգղիացւոց, Venice, In the Island of S. Lazzaro, 1852.*

Տաղ երգեալ ի շանթաձիգ մրրկի (Stanzas Composed During a Thunder-Storm) և *Տաճար Ս. Պետրոսի (Church of St. Peter)* բանաստեղծությունները, ինչպես նաև լորդ Բայրոնի անգլերեն և հայերեն ստորագրությունները: Այդ բանաստեղծություններից առաջինը Հրեական մեղեդիներ շարքից է, իսկ երկրորդը, երրորդը և վերջինը հատվածներ են *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմից, որը գրված է սպենսերյան տներով՝ իննյակներով [Էդմունդ Սպենսեր (1552-1599)՝ անգլիացի բանաստեղծ, որը տաղաչափության մեջ ավանդական ութնյակի փոխարեն մտցրել է ինը տողանոց տուն]: Ցավոք, այդ բանաստեղծությունների թարգմանիչները չեն նշվել: Սակայն, մեր կարծիքով, կասկածից վեր է, որ դրանք թարգմանել է Ղ. Ալիշանը: Դրանում համոզվելու համար բավական է *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ նվագի վերոհիշյալ երկու հատվածները՝ 178-184 (*Ուղերձ առ Ուկկիանոս*) և 153-159 (*Տաճար Ս. Պետրոսի*) իննյակները, համեմատել Մխիթարյանների հետագա հրատարակությունների հետ, որտեղ զետեղվել են այդ հատվածները (ՃՀԸ-ՃՁԲ և ՃԾԳ-ՃԾԹ իննյակներ) և նշվել է թարգմանիչը՝ Ղ. Ալիշան: Պարզվում է, որ չնայած հետագա հրատարակություններում կան որոշ, հիմնականում խմբագրական բնույթի փոփոխություններ, թարգմանության կառուցվածքը, ոճը և արվեստը ընդհանուր առմամբ նույն ձևաչափին ունեն: Բացի դրանից, 1974-ին «Հայ ընտանիք» ամսագրում զետեղված անստորագիր մի հոդվածից (հայերեն և անգլերեն) տեղեկանում ենք (մեր կարծիքով, տեղեկությունը միանգամայն հավաստի է), որ Ղ. Ալիշանը թարգմանել է Բայրոնի «քանի մը քնարերգութիւններ, որոնք ամփոփուած են մէկ հատորի մէջ եւ լոյս տեսած՝ 1870-ին»⁷: Այստեղ խոսքը 1870-ին հրատարակված՝ Բայրոնի *Հայերեն վարժությունները և բանաստեղծությունները* ժողովածուի մասին է (նշված հոդվածի անգլերեն տարբերակում բերված է «մէկ հատորի մէջ ամփոփված» նյութերի, այդ թվում և բանաստեղծությունների լրիվ ցանկը), որի մեջ համարյա ամփոփոխ զետեղված են *Ծաղկաքաղում* ընդգրկված Բայրոնի բոլոր (թվով՝ վեց) բանաստեղծությունները:

1860-ին Վենետիկում լույս է տեսել Բայրոնի *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ երգը՝ *Բտալիա* վերնագրով (անգլերեն և հայերեն)⁸: Պոեմի այդ նվագի թարգմանությունը կատարել է Բայրոնի հայ առաջին թարգմանիչներից մեկը՝ հայ նոր քնարերգության նախապետ Ղևոնդ Ալիշանը (1820-1901), որը հիացել է Բայրոնով և մեծարել նրան՝ անվանելով ոչ միայն դարի նշանավոր բանաստեղծ, «այլև

⁷ *Լորտ Պայրըն հայ գրականության մէջ* (Հայ ընտանիք, 1974, № 11-12, էջ 8):

⁸ **Lord Byron**, *Childe Harold's Pilgrimage, Canto the fourth, Venice, In the Island of S. Lazarus*, 1860 - Բայրոն, *Բտալիա*, թարգմ. Ղ. Ալիշան, Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 1860:

առաջին ի նոսին վկայեալ է իր յոլովից գիտնոց»⁹: Չնայած դրան, Ղ. Ալիշանը համամիտ չէր Բայրոնի պոեմում տեղ գտած թախծամոլության ու մեղամաղձոտության արտահայտություններին և իր թարգմանության մեջ դրանք կամ զեղչել է, կամ էլ իր վերաբերմունքն է ցույց տվել ծանոթագրությունների և մեկնաբանությունների միջոցով: Այնուհետև այդ թարգմանությունը նույնությամբ վերահրատարակվել է 1889-ին, 1891-ին և 1901-ին: Նշենք նաև, որ այս պոեմին, բացի Ղ. Ալիշանից, անդրադարձել են ևս հինգ հայ թարգմանիչներ՝ Վ. Անտոնյանը, Լեոնենը, Հ. Միրզայանը, Հովհ. Թումանյանը և Հ. Սևանը:

1870-ին Մխիթարյանները հրատարակում են Բայրոնի *Հայերեն վարժությունները և բանաստեղծությունները* ժողովածուն (անգլերեն և հայերեն)¹⁰, որտեղ գրեթե նույնությամբ (փոխվել են հաս ու կենտ բառեր) արտատպվել են 1852-ին հրատարակված *Ծաղկաքաղ քերթողաց անգղիացւոց* ժողովածուում զետեղված՝ Բայրոնին վերաբերող նյութերն ամբողջությամբ, որոնց ավելացվել է ընդամենը չորս բանաստեղծություն՝ *Ի մահ օրհորդի միոյ քեռորդի քերթողին եւ սիրելի յոյժ նմա* (*On the Death of a Young Lady*), *Առ Դուքսն Տորսէդ* (*To the Duke of Dorset*), *Արտասուք* (*The Tear*) և *Յետին տողը Պայտընի* (*On this Day I Complete My Thirty-sixth Year*): Դրանցից առաջին երեքը *Պարապոյթյան ժամեր* շարքից են: Ցավոք, այդ ժողովածուում զետեղված բանաստեղծությունների թարգմանիչները նույնպես նշված չեն: Վստահորեն կարող ենք պնդել, որ դրանք թարգմանել է Ղ. Ալիշանը, ընդ որում, վերջին բանաստեղծության թարգմանության տեքստը բառացիորեն նույնն է, ինչ որ տպագրված է 1905-ին «Բազմավեպում», որտեղ թարգմանիչը նշված է: Վերոհիշյալ ժողովածուն նույնությամբ արտատպվել է 1907-ին:

1880-ին Մխիթարյանները հրատարակում են օտարազգի բանաստեղծների ստեղծագործություններից կատարված թարգմանությունների ժողովածուի երկրորդ մասը, որտեղ *Նկարագրականք* խորագրի տակ զետեղվել են նաև Բայրոնի երկու բանաստեղծությունները՝ *Գերեզմանք հանճարեղացն Յիտալիա* և *Յլամարտ ի Մպանիա* վերնագրերով¹¹: Այդ ժողովածուն նույնությամբ վերահրատարակվել է 1883-ին: Բացի դրանից, նույն 1880-ին հրատարակվել է այդ ժողովածուի համառոտ տարբերակը, որի մեջ տեղ է գտել Բայրոնի վերոհիշյալ բանաստեղծություններից միայն առաջինը¹²: Այդ բանաստեղծությունները հատվածներ են Բայրոնի *Չալլո Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ (54-60 իննյակներ) և առաջին (72-80 իննյակներ) նվազներից: Ավելացնենք, որ չնայած վերոհիշյալ ժողովածուներում թարգմանիչները նշված են հավաքական անունով (Մխիթարեան միաբանից), սակայն ակնհայտ է, որ Բայրոնի

⁹ Նույն տեղում, Ազդ:

¹⁰ Lord Byron's Armenian Exercises and Poetry, Venice, In the Island of S. Lazzaro, 1870.

¹¹ Տե՛ս *Ծաղկաքաղ հատուածք յօտարազգի մատենագրաց*, թարգմ. Մխիթարեան միաբանից, մասն երկրորդ. *Քերթուածք*, Վենետիկ, ի վանս Ս. Ղազարու, 1880, էջ 132-136:

¹² Տե՛ս *Համառոտ ծաղկաքաղ հատուածոց ի քերթութեանց օտարազգի մատենագրաց*, Վենետիկ, Վանք Մխիթարեանց, 1880, էջ 78-80:

բանաստեղծություններից առաջինը թարգմանել է Ղ. Ալիշանը (տե՛ս 1860-ի հրատարակության ԾԴ-Կ իննյակները), իսկ երկրորդը՝ Խ. Գալֆայանը (տե՛ս «Բազմավեպի» 1853-ի N 21-ում բերված ՀԲ-Ձ իննյակները):

1895-ին Մխիթարյանները հրատարակում են ծագումով գերմանացի, ֆրանսիական բանասեր, հայագետ Գ. Շրումպֆի (1844-1852) *Ուսումնասիրությունը հայ լեզուի եւ մատենագրության յԱրեւմուտս (ԺԴ - ԺԹ դար)* աշխատությունը: Դրա հիմքում ընկած է հեղինակի 1890-ին Լոնդոնում հրատարակած *Հայագիտությունը Եվրոպայում* (l'étude des Arméniennes en Europe) հոդվածաշարը, որտեղ ներկայացվել են XIV-XIX դդ. եվրոպացի հայագետների համառոտ կենսագրությունները և քննության ենթարկվել նրանց գործերը: Հոդվածաշարը ֆրանսերենից հայերեն է թարգմանել և անհրաժեշտ լրացումներով հրատարակության պատրաստել հայ մատենագետ և թարգմանիչ Գ. Զարբհանալյանը (1827-1901): Աշխատությունում գետնդրվել է նաև *Հորտ Պայրն* հոդվածը¹³, որտեղ բերվում են հայերին վերաբերող հատվածներ Բայրոնի նամակներից (ընդհանուր թվով՝ տասը), ինչպես նաև *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար Բայրոնի գրած հայտնի առաջաբանը:

1966-ին Մխիթարյանները հրատարակում են պատկերազարդ տեղեկագիրք (հեղինակը չի նշված) Մխիթարյան միաբանության Մայրավանքի վերաբերյալ, որի մեջ տեղ են գտնում նաև Բայրոնի սենյակի նկարագրությունը, մի հատված *Անգլերեն-հայերեն քերականության* ձեռնարկի համար Բայրոնի գրած հանրահայտ առաջաբանից և Բայրոնին վերաբերող որոշ նկարների (այդ թվում՝ Հ. Այվազովսկու՝ *Բայրոնի այցը Մխիթարյաններին Ս. Ղազար կղզում*՝ նկարի) վերարտադրանկարներ¹⁴:

Բացի վերոհիշյալ գրքերից ու ժողովածուներից, Մխիթարյանները, Բայրոնի՝ Ս. Ղազար կատարած այցելության հիշատակի առթիվ, կանոնավոր կերպով հրատարակել են գրեթե նույնատիպ պատկերազարդ ծողովածու-գրքույկներ (անգլերեն՝ հաճախ չնշելով հրատարակման տարեթիվը)¹⁵: Այդ ժողովածուներում գրեթե միշտ գետնդրվել են հայերին վերաբերող հատվածներ Բայրոնի նամակներից՝ կենսագրական ծանոթագրություններով, Մխիթար աբբահոր, Ս. Ղազարի տեսարժան վայրերի, Բայրոնի հայերեն և անգլերեն ստորագրությունների, ինչպես նաև նրան վերաբերող լուսանկարների և գեղանկարների վերարտադրանկարներ:

2. «*Բազմավեպ*» *հանդեսում*: «Բազմավեպը» իբրև գրական, հայագիտական պարբերական (գործում է 1843-ից առ այսօր), ընթերցող հասարակությանը ծանոթացնում է ոչ միայն հայ, այլև եվրոպական գրականությանը: Տարիներ շարունակ «Բազմավեպի» էջերում գետնդրվել են

¹³ Տե՛ս *Ուսումնասիրությունը հայ լեզուի եւ մատենագրության յԱրեւմուտս (ԺԴ - ԺԹ դար)*, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1895, էջ 339-347:

¹⁴ *Սուրբ Ղազար: Մայրավանք Մխիթարեան միաբանության*, Վենետիկ, Ս. Ղազար, 1966, էջ 50-53:

¹⁵ Տե՛ս, օրինակ, *Armenian Album on Byron, In Memory of Lord Byron's Sojourn at St. Lazarus, Venice, San Lazzaro, 1955. – Lord Byron and the Armenians* (հրատարակման թվականը բացակայում է) և այլն:

Շեքսպիրի, Պուշկինի, Լերմոնտովի, Գյոթեի, Միլտոնի և, վերջապես, Բայրոնի ստեղծագործությունները:

Հանդեսի հիմնադրումից երեք տարի անց, դեռևս 1846-ին, նրա էջերում հանդիպում ենք մի բանաստեղծության, որի ոչ հեղինակը, ոչ էլ թարգմանիչը նշված չեն¹⁶: Առաջին իսկ ընթերցումից զգացվում է, որ դա մի հատված է Բայրոնի *Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմից, իսկ ավելի մանրամասն ուսումնասիրությունից պարզվում է, որ այդ բանաստեղծությունը նշված պոեմի չորրորդ նվագի 153-159 իննյակներն են՝ Ղ. Ալիշանի թարգմանությամբ, որոնք աննշան փոփոխություններով 1852-ին ընդգրկվել են *Ծաղկաքաղում*: Փաստորեն, դա Մխիթարյանների կողմից Բայրոնի ստեղծագործության առաջին հրատարակությունն է (ինչպես նշել ենք, նրա որոշ թարգմանություններ հայերենից տեղ են գտել 1832-ին հրատարակված *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկում), սակայն անհասկանալի պատճառներով հեղինակի անունը չի նշվում: Նույն թվականին հրատարակված մի հոդվածի¹⁷ միջոցով հայ ընթերցողն առաջին անգամ տեղեկանում է Բայրոնի կենսագրությանը, ստեղծագործություններին և Մխիթարյանների հետ ունեցած նրա անձնական ծանոթությանը: Այդ հոդվածում բերված են նաև հատվածներ հայերին վերաբերող նրա նամակներից: Հոդվածագիրը նշում է. «Ինչպես ուրիշ շատ ճանապարհորդներ, ևս առաւել Անգլիացիք որ Վենետիկ քաղաքը կուգան, մասնաւոր եռանդով մը կուգան նաև մեր սուրբ Ղազարու վանքը, որ տեսնեն թէ իրենց քաջ ու առաջին բանաստեղծը ո՛ր տեղ հայերէնի դաս առեր է, ու վարպետը ո՛վ է եղեր»¹⁸: Փաստորեն, Ս. Ղազարը վաղուց ուխտատեղի է դարձել ոչ միայն հայերի, այլև անգլիացիների համար, որոնք հատուկ այցելել են Ս. Ղազար՝ տեսնելու այն վայրը, որտեղ հայերեն է սովորել իրենց հայրենակիցը: Ընթերցողը հոդվածից տեղեկանում է նաև հայերին ցույց տված Բայրոնի օգնության և Հունաստանում նրա մահվան վերաբերյալ: Հոդվածը, որն, ըստ մեր ունեցած տվյալների, Մխիթարյան պարբերականներում անգլիացի բանաստեղծի մասին առաջին հրապարակումն է, հայ ընթերցողին ծանոթացնում է Բայրոնին և նրա ստեղծագործությանը:

Միանգամայն բնական է, որ այդ ծանոթությունը սկսվում է նաև թարգմանություններից, որոնց մեծ տեղ էին տալիս Մխիթարյանները: Երբեմն Բայրոնից կատարված թարգմանություններն ուղեկցվում են նաև կենսագրական բնույթի առաջաբաններով և ակնարկներով: Այսպես, «Բազմավեպի» 1853-ի համարներից մեկում տպագրվել է մի հոդված ցլամարտի մասին¹⁹: Ցլամարտի ընթացքը մանրամասն նկարագրելուց հետո, հոդվածի վերջում, հեղինակը նշում է, որ իսպանական ազգային այդ հանդիսախաղին ականատես են եղել եվրոպացի շատ գրողներ, որոնք հետագայում այն նկարագրել են իրենց չափածո և արձակ ստեղծա-

¹⁶ Սուրբ Պետրոս, ի Հռովմ (Բազմավեպ, 1846, N 16, էջ 247-248):

¹⁷ Լորտ Պայքըն (անստորագիր) (Բազմավեպ, 1846, N 19, էջ 293-297):

¹⁸ Նույն տեղում, էջ 296:

¹⁹ Խ. Գ., Ցլամարտութիւն (Բազմավեպ, 1853, N 21, էջ 326-331):

գործություններում, և «իբրև նկարագրական մասին ամենագեղեցիկ օրինակ» բերում է «Լոռու Պա՛յրըն անգղիացի մեծ քերթողին տուած վառվռուն նկարագիրը իր Չայլոտ Հարոլտ ըսուած հռչակաւոր բանաստեղծութեանը մէջ»²⁰: Այստեղ բերված է մի հատված Բայրոնի *Չայլոտ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի առաջին նվագից՝ ՀԲ-2 (72-80) իննյակները Խ. Գ.-ի թարգմանությամբ: Մեր կարծիքով, Խ. Գ.-ն նույն ինքը՝ հայ բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ, հրապարակախոս և եկեղեցական գործիչ Խորեն Գալֆայանն (1832 - 1892) է, որը հաճախ ստորագրել է՝ Հ. Խ. Գ., Խ. Վ. Գ., Խ. Նար-Պեյ, Խորեն Նար-Պեյ և այլն: Նշենք, որ այդ իննյակներից առաջինի և վերջինի թարգմանությունը լրիվ չէ (բերված է միայն դրանց առաջին քառատողերի թարգմանությունը):

Շատ հաճախ նույն ստեղծագործությունը թարգմանել են տարբեր հեղինակներ՝ թե՛ Միսթարյաններ, թե՛ այլ թարգմանիչներ: Այսպես, օրինակ, 1858-ին ծովին նվիրված մի քանի բանաստեղծությունների շարքում «Բազմավեպում» լույս է տեսնում մի հատված Բայրոնի *Չայլոտ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ նվագից (178-184 իննյակները)՝ *Առ Ուկլեան* վերնագրով²¹, իսկ 1922-ին այդ հատվածը Հովհ. Մասեհյանի թարգմանությամբ հրատարակվում է Վիեննայում լույս տեսնող «Արեգ» ամսագրում՝ *Ուկլիանոսին* վերնագրով²²: Առաջին թարգմանության մեջ, որտեղ չի նշված թարգմանիչը, պահպանվել է բնագրի կառուցվածքը (իննյակները թարգմանության մեջ նույնպես մնացել են իննյակներ), իսկ երկրորդ թարգմանության մեջ այն խախտվել է (իննյակները հիմնականում թարգմանվել են 10-11 տողով, իսկ մեկական իննյակ՝ նույնիսկ 12 և 13 տողով): Մեր կարծիքով, առաջին թարգմանությունը պատկանում է Ղ. Ալիշանին: Դրանում մենք համոզվում ենք, երբ այն համեմատում ենք հետագայում Միսթարյանների կողմից Ղ. Ալիշանի թարգմանությամբ *Չայլոտ Հարոլդի ուխտագնացությունը* պոեմի չորրորդ նվագի այլ հրատարակություններում²³ զետեղված համապատասխան հատվածի հետ: Համեմատությունից պարզվում է, որ պոեմի չորրորդ նվագի առանձին գրքով լույս տեսած տարբերակում կան չնչին, շատ աննշան փոփոխություններ և շտկումներ: Այսպես, օրինակ, 1858-ի հրատարակության մեջ 178-րդ իննյակի առաջին տողում բերված «անտառք անմարդաձայնք եւ անկոխք» արտահայտությունը 1860-ի հրատարակությունում փոխարինվել է «անտառք անճանապարհք եւ անկոխք» արտահայտությամբ, որը, նախ, ավելի լավ է հնչում հայերեն և, երկրորդ, ավելի մոտ է բնագրին (անգլերեն՝ pathless woods): Այնուհետև, 182-րդ իննյակի «Եւ բըռնաբար զահ իւրեանց արկանէին թագազարդ. // Յեկաց խրժից եւ ստըրկաց նըվաճեցան ափունքն այն.» երկտողը փոխարինվել է «Որպէս յետոյ արկին անդ բըռնաւորաց ձեռք աղարտ: // Ափունքն այն

²⁰ Նույն տեղում, էջ 329:

²¹ Բայրոն, *Առ Ուկլեան* (Բազմավեպ, 1858, N 6, էջ 173-174):

²² Բայրոն, *Ուկլիանոսին*, թարգմ. Հովհ. Մասեհյան (Արեգ, 1922, N 5, էջ 287-289):

²³ Բայրոն, *Բտակիա. Չայլոտ Հարոլդ* պոեմի 4-րդ երգը (թարգմ. Ղ. Ալիշան, Վենետիկ, Ս. Ղազար, 1860, 1890, 1891, 1901):

խուժք եւ սըտրուկք նըւաճեցան յօտարաց.» երկտողով, որը, արտահայտելով նույն միտքը, կարծես թե հնչում է ավելի անկաշկանդ (անգլերեն՝ And many a tyrant since; their shores obey // The stranger, slave, or savage; their decay), և այդպիսի մի քանի ոչ էական փոփոխություններ ևս: Դա միանգամայն բնական է և բացատրելի, քանի որ այնպիսի մի քնարերգու, ինչպիսին էր Ղ. Ալիշանը, նոր, այն էլ պոեմի մի ամբողջ նվազի հրատարակության ժամանակ, չէր կարող չանդրադառնալ թեկուզև իր իսկ թարգմանությանը և կատարել որոշ հղկումներ, խմբագրական ուղղումներ ու շտկումներ: Միաժամանակ նշենք, որ *Չայլո չարոլդի ուխտագնացությունը* պոեմն ամբողջությամբ հայերեն հրատարակվել է միայն 1965-ին՝ Հենրիկ Սևանի թարգմանությամբ²⁴, որտեղ թարգմանիչը նույնպես պահպանել է հեղինակի ընտրած կառուցվածքը՝ իննյակները:

«Բազմավեպի» 1904-ի տարբեր համարներում Հովհ. Պալյանի թարգմանությամբ լույս են տեսնում Բայրոնի որոշ բանաստեղծություններ *Հրեական մեղեդիներ* շարքից՝ *Տեսիլն Պաղտասարի* (*Vision of Belshazzar*) – N 7, *Կործանումն Սենեքերիսի* (*The Destruction of Sennacherib*), *Լացեք ի վրայ... (Oh! Weep for those)* և *Բաբելոնեան ջրոց մօտ...* (*By the Rivers of Babylon We Sat Down and Wept*) – N 8, *Մեռար, հեռացար...* (*Thy Days are Done*) – N 11: Նշենք, որ Հովհ. Պալյանը ինչպես «Բազմավեպում», այնպես էլ այլ պարբերականներում, բացի Բայրոնի ստեղծագործություններից, հանդես է եկել նաև Գյոթեի, Չեխովի, Պուշկինի, Լերմոնտովի և այլ գրողների ստեղծագործությունների թարգմանությամբ:

1905-ին «Բազմավեպում» լույս է տեսնում Բայրոնի *Յեսին տողը Պայրնի* (*On This Day I Complete My Thirtysixth Year*) բանաստեղծությունը (թարգմ. Ղ. Ալիշան), որի վերնագրից անմիջապես հետո թույլ է տրվել անճշտություն՝ գրվել են «ի փետրուարի, 1824» բառերը (ի միջի այլոց, այդ անճշտությունը բացակայում է բանաստեղծության 1870-ի, այսինքն, հայերեն առաջին հրատարակության մեջ, որտեղ նշված է՝ «ի յունուար, 1824»): Բացի դրանից, բանաստեղծությունից անմիջապես հետո նշվում է, որ այն անսխալ թարգմանություն է: Դա նույնպես անճշտություն է, քանի որ այն, ինչպես արդեն նշել ենք, դեռևս 1870-ին տեղ է գտել Մխիթարյանների հրատարակած՝ Բայրոնի *Հայերեն վարժությունները և բանաստեղծությունները* ժողովածուում: Ինչպես հայտնի է, սա Բայրոնի վերջին բանաստեղծությունն է, որը բանաստեղծը գրել է իր ծննդյան երեսունվեցերորդ տարեդարձի օրը՝ 1824-ի հունվարի 22-ին: Բայրոնի զինակից, Իտալիայի կարբոնարական շարժման մասնակից, կոմս Պիետրո Գամբայի վկայությամբ, «Այդ առավոտյան Լորդ Բայրոնը դուրս գալով իր ննջարանից և մտնելով այն սենյակը, որտեղ հավաքվել էին գնդապետ Ստանհոփն և իր ընկերներից ոմանք, ժպտալով ասաց. «Անցյալ օրը Դուք դժգոհում էիք, որ ես այժմ բանաստեղծություններ չեմ գրում: Այսօր իմ ծննդյան օրն է, և ես հենց նոր ավարտեցի մի բան, որը, կարծում եմ, ավելի լավն է, ինչ սովորաբար գրում եմ»: Այնուհետև նա ներկայացրեց այս

²⁴ Բայրոն, *Երկերի ժողովածու*, Ե., 1965, էջ 99-275:

հրաշալի և հուզիչ բանաստեղծությունը»²⁵։ Այս բանաստեղծության մեջ Հունաստանի ազատության համար պայքարող բանաստեղծը կարծես թե հանրագումարի է բերում իր ապրած երեսունվեց տարիները, ապրելու իմաստը, կանխագգում իր մոտալուտ մահը։ Նրա կյանքի օրերը նմանվել են դեղնած տերևների, սիրո ծաղիկները և պտուղները գնացել են, մնացել են միայն տանջանքն ու ցավը.

Ժամ է սրբոխ առնուլ արդ դուլ և դադար,
Զի շարժել զայլս այսուհետեւ ոչ զօրէ.
Եւ թէպէտ չիք որ յիս հայի սիրաբար,
Այլ սիրել՝ միշտ ինձ քաղցր է:

Եկեալ հասին սաղարթք կենաց ազագուն
Ի թօթափել մըրգաց սիրոյն և ծաղկան.
Որդն և երբ արդ և ցաւալից անձկութիւն.
Սոքա եւեթ ինձ մընան²⁶:

Սակայն բանաստեղծի համար կա Հունաստանի ազատության համար մղվող պայքարը.

Զարթիր. – չասեմ քեզ, Յունաստան, զարթեար դու –
Զարթիր հոգիդ իմ. օն, հայեա՛ց տես, ընդ ո՛ր
Արին սրբոխս ի լիճն իւր մայր հեղուցու.
Եվ ապա հա՛ր, հար ի խոր²⁷:

Կոմս Պ. Գամբայի վկայությամբ, «Այս տողերից, ինչպես նաև նրա ատորյա խոսակցություններից, մենք գիտակցում ենք, որ նրա ձգտումն ու հույսը անփոփոխ սևեռված էին դեպի Հունաստան իր արշավի փառապանծ նպատակի վրա, և որ նա ուներ անհրաժեշտ ցանկություն՝ վերադառնալ հաղթանակած, կամ չվերադառնալ»²⁸։ Մահվանից ընդամենը երեք ամիս առաջ գրված այս բանաստեղծությունը²⁹ լի է անսահման թախծով ու տխրությամբ։ Սակայն այդ տխուր տողերի միջից մեր առջև վեր է հառնում Բայրոնի իր համարձակ ոգով, որը պատրաստ է իրեն զոհել հանուն Հունաստանի։ Այս բանաստեղծության մեջ, ինչպես նշվեց

²⁵ *The Complete Works of Lord Byron, in one volume, Paris, Published by A. and W. Galignani and Co., 1835, p. 906.*

²⁶ *Յետին տողը Պայրոնի Միստրոնի, ի փետրուարի, 1824, թարգմ. Հ. Ղ. Վ. Ալիշան (Բազմավեպ, 1905, N 3, էջ 128):*

²⁷ Նույն տեղում:

²⁸ *The Complete Works of Lord Byron..., p. 906.*

²⁹ Բայրոնի վերջին՝ *Այսօր լրանում է իմ երեսունվեցերորդ տարին*, բանաստեղծության թարգմանությամբ հանդես են եկել տարբեր թարգմանիչներ։ Այսպես, օրինակ, այս բանաստեղծության թարգմանությունը 1847-ին տպագրվել է «Ազգասերի» N 91-ում՝ Օ. Ֆ. ստորագրությամբ, 1905-ին՝ «Մուրճ» ամսագրի հինգերորդ համարում՝ Հովհ. Մասեհյանի թարգմանությամբ (էջ 65-66)։ Այս բանաստեղծության թարգմանության այլ տարբերակներ երևում են նաև «Մասյաց աղավնիում» (1860, N 12. թարգմանիչը չի նշվում) և «Արագածում» (1926, N 11՝ Լիխսի ստորագրությամբ)։

վերևում, Բայրոնը կարծես թե մարգարեաբար գուշակում է իր մոտալուտ մահը: Բանաստեղծը մահանում է 1824-ի ապրիլի 19-ին: Խոր վիշտը, որ համակել է հույներին իրենց ազնիվ բարերարի, ազատության պայքարի երգչի ու մարտիկի մահվան կապակցությամբ, զգացվում է այն պաշտոնական հայտարարությունից, որ հրապարակել են հունական ազգային ազատագրական շարժման ղեկավարները: Համաձայն այդ հայտարարության, հրանոթներից արձակվում են երեսունյոթ համազարկ, որոնց թիվը համապատասխանում է բանաստեղծի տարիքին: Հասարակական գրասենյակները, խանութները բացառությամբ մթերային խանութներից ու դեղատներից, փակվում են, իսկ բոլոր տեսակի տոնախմբությունները և համերգները՝ հետաձգվում: Հայտարարվում է նաև 21-օրյա սուգ, եկեղեցիներում տեղի են ունենում են սգո արարողություններ³⁰:

1911-ին «Բազմավեպում» *Գիրքեր ու թերթեր* խորագրի տակ ներկայացվում է «Բայրոն, Ծովահենը, թարգմ. բնագրից Յ. Ջ. Միրզայեանց³¹, տպ. «Փարոս», Թեհրան 1911» գիրքը: Խոսելով թարգմանչի կատարած աշխատանքի մասին՝ գրախոսը նշում է. «Գեղեցիկ թարգմանություն մըն է Միրզայեանցի ծովահենը: Լեզու մը և չափ մ'ունի որ կը սահին. և աղեկ կը թարգմանեն Բայրոնի կտրուկ, կրքոտ, կրակոտ ոգին», ապա ավելացնում՝ «Յաջողութեան նպաստած է նաև Ռուսահայոց լեզուն. համառօտ, ճիշդ, պարզ՝ բոլորովին յստակ կը թողու տեսնել Բայրոնի միտքերը»³²: Գրախոսականում բերված են նաև հատվածներ *Ծովահենը* պոեմի առաջին (11-րդ տնից), երկրորդ (12-րդ տնից) և երրորդ (վերջին՝ 24-րդ տնից) նվազներից: Կատարելով այդ մեջբերումները՝ գրախոսը եզրակացնում է. «Միրզայեանց դժուար գործ մը յաջողութեամբ կատարած է»³³: Ցավոք, գրախոսականի հեղինակը չի նշվում և նրա մասին մենք ոչինչ ասել չենք կարող:

«Բազմավեպի» 1924-ի ապրիլյան համարում մի անգամ ևս հանդիպում ենք Բայրոնի վերջին բանաստեղծությանը³⁴: Այստեղ արդեն ուղղված են հանդեսի 1904-ի երրորդ համարում տեղ գտած անճշտությունները՝ նշվում է, որ բանաստեղծությունը գրվել է «ի յունուար, 1824» և հայերեն տպագրվել է դեռևս 1870-ին Վենետիկում: Այս համարում բերվում

³⁰ Տե՛ս, օրինակ, **Алексеев М. П.**, *Русско-английские литературные связи (XVIII век-первая половина XIX века)*, М., 1982.

³¹ Հովսեփ Միրզայան(ց) (1866-1935), թարգմանիչ, պետական գրծիչ: Ծնվել է Համադանում (Իրան), կրթությունը ստացել է Նոր Զուղայի հայկական դպրոցում և Թեհրանում: Տիրապետել է հայերենին, ֆրանսերենին, պարսկերենին և անգլերենին: Վարել է պետական պաշտոններ, բազմիցս ընտրվել է Իրանի մեջլիսի պատգամավոր (1910, 1915, 1923): Պետական գործունեությանը զուգընթաց՝ զբաղվել է գրական, թարգմանչական աշխատանքով: Հանդես է եկել ոչ միայն Բայրոնի (*Ծովահենը*, *Չայլո Հարոլդի ուխտագնացությունը*), այլև Լոնգֆելդի, Վ. Սկոտի, Օմար Խայամի, Սաադիի և ուրիշների ստեղծագործությունների թարգմանությամբ:

³² Բազմավեպ, 1911, N 6, էջ 284:

³³ Նույն տեղում, էջ 285:

³⁴ **Բայրոն**, *Այսօր լինիմ ամաց երեսնից եւ վեցից (Յետին Տողք Պայրոնի)*, թարգմ. Հ. Ղևոնդ Ալիշան (Բազմավեպ, 1924, N 4, էջ 119):

են նաև հատվածեր Բայրոնի հայ մշակույթին, պատմությանն ու լեզվին վերաբերող նամակներից և օրագրություններից (անգլերեն և հայերեն, թվով՝ տասնհինգ)³⁵: Նամակները, որոնք գրվել են 1816-1821 թվականներին, հասցեագրվել են Թ. Մուրին (երկու նամակ) և Ջ. Մըրրեին (տասներկու նամակ): Բացի դրանից, գետեղվել են *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար նախատեսված՝ Բայրոնի գրած առաջաբանը և Թ. Մուրի կողմից Բայրոնի որոշ նամակներին տված կենսագրական ծանոթությունները:

«Բազմավեպի» 1924-ի հինգերորդ համարում հանդիպում ենք Բայրոնի *Երբայական մեղեդիներին* (*Ո՛հ լացեք, Հորտանանու ավերուն վրա, Հեփթայեի աղջիկը, Բաղդասարի տեսիլքը, Կոտորած Սենեքերիմի բանակին*)՝ Արսեն Ղազիկյանի թարգմանությամբ³⁶: Աշխարհաբար հայերենի պահակ կամ պահապան - այսպես է կոչել հայ մամուլը դասական և եվրոպական գլուխ-գործոցների թարգմանիչ Ա. Ղազիկյանին³⁷, որը հանդես է եկել Վերգիլիոսի, Հոմերոսի, Սոփոկլեսի ստեղծագործությունների, ինչպես նաև ֆրանսիական, անգլիական և գերմանական գրականության թարգմանությամբ:

3. «Գեղունի» և «Հայ ընտանիք» հանդեսներում: «Գեղունին» Վենետիկի Միփթարյան միաբանության հրատարակած պատմաբանասիրական և գրական-գեղարվեստական պատկերագրող երկամսյա հանդես է, որը լույս է տեսել 1901-1906, 1909, 1927, 1947 և 1949 թթ., իսկ «Հայ ընտանիքը» սփյուռքահայության համար նախատեսված՝ Վենետիկի Միփթարյան միաբանության պատկերագրող ամսագիր, որը լույս է ընծայվել 1969-1987 թթ.: Մինչ այդ՝ 1947-1967 թթ. այն լույս է տեսել «Միփթարյան ընտանիք» (1960-1962-ին՝ «Ընտանիք») անվանումով:

1906-ին «Գեղունի» հանդեսում առաջին անգամ հայերեն լույս է տեսնում Բայրոնի *Մանֆրեդ* դրամատիկական պոեմը՝ հրապարակախոս Ավ. Եզեկյանի (1849-1916) թարգմանությամբ³⁸: Թարգմանիչը չի պահպանել բնագրի բանաստեղծական կառուցվածքը՝ կատարելով արձակ թարգմանություն: Չնայած դրան, այդ թարգմանությունը բավականին հաջող է, հնչում է հայերեն և կարդացվում է մեծ հետաքրքրությամբ: Ավ. Եզեկյանը կրթություն է ստացել Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, պաշտոնավարել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, աշխատակցել «Մշակ», «Տարագ», «Աղբյուր» և այլ

³⁵ *Byron's Letters and Journals: with Biographical Notes - Նամակներ եւ օրագրություններ Լորտ Պայրընի. հանդերձ կենսագրական ծանոթություններով* (նույն տեղում, էջ 122-132):

³⁶ Բայրոն, *Երբայական մեղեդիներ* (Բազմավեպ, 1924, N 5, էջ 173-175):

³⁷ Արսեն Ղազիկյան (1870-1932), հայ թարգմանիչ: Թարգմանություններից բացի, ունի նաև մենագրություններ, ինչպես, օրինակ, *Դաստյ եւ իր թարգմանիչները* (1912), *Հայ լեզուի ուղղագրական դասեր* (1923): Ծրագրել էր հիսուն հատոր նվիրել հայ արդի թարգմանական գրականությանը, սակայն իր վիթխարի աշխատությունը՝ *Հայկական նոր մատենագիտություն* (1905-1912), իրենից խլեց երկար տարիներ:

³⁸ Լոբոս Պայրն, *Մանֆրեդ*, թարգմ. Ա. Եզեկեան (Գեղունի, 1906, N 1-10, էջ 18-62):

պարբերականների, հանդես եկել Շեքսպիրի, Բայրոնի և այլոց թարգմանություններով:

Հարկ է նշել, որ Բայրոնի *Մանֆրեդ* դրամատիկական պոեմի թարգմանությանը հետագայում անդրադարձել է նաև պետական և հասարակական գործիչ Հովհաննես Մասեհյանը (1864-1931), որը չնայած հայ իրականության մեջ հայտնի է որպես Շեքսպիրի երկերի ամենաականավոր թարգմանիչ, հանդես է եկել նաև այլ հեղինակների ստեղծագործությունների թարգմանությամբ, որոնց մեջ իրենց ուրույն տեղն են գրավում Բայրոնից կատարած թարգմանությունները: Հ. Մասեհյանի՝ *Մանֆրեդի* թարգմանությունը բազմիցս հրատարակվել է³⁹:

Բայրոնի և Միխայիլ Բարատինսկիի միջև տեղի ունեցած զրույցների որոշ դրվագներ, ինչպես նշվում է հայ մամուլում⁴⁰, արտացոլում են գտել Մանֆրեդի երրորդ գործողության մեջ: Այդ մասին հիշատակում է նաև Ա. Մորուսան իր գրքում. «Ո՛վ գիտե, թերևս այս արարը հայ վանականների հետ Բայրոնի ունեցած զրույցների արձագանքն էր»⁴¹: Մանֆրեդը հիվանդ է, և վանահայրը փորձում է նրան հաշտեցնել ինքն իր հետ: Կաթոլիկ քահանան (Հ. Ավգերյանը կամ Ս. Սոմայանը) ապաշխարանքի և թողության ճանապարհն են ցույց տալիս Մանֆրեդին (Բայրոնին):

Որդիս,

Ես չխուսեցի պատժելու մասին,

Այլ ապաշավի և ներողության.

Եվ քեզ է մնում դրա ընտրելը. գալով թողության...

Իսկ առաջինը երկնքին թողնենք...⁴²:

(թարգմ. Հ. Մասեհյան)

«Հայ ընտանիք» հանդեսը 1970-1980-ական թվականներին բավական հաճախ է անդրադարձել Բայրոնի Ս. Ղազար կղզում անցկացրած օրերին՝ տպագրելով ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հեղինակների հոդվածներ, ընդ որում, այդ նյութերի մեծ մասը բերվել է երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն, երբեմն միայն անգլերեն: Այս տեսակետից բավականին հարուստ է ամսագրի 1974-ի 11-12 միացյալ համարը, որի շատ նյութեր վերաբերում են Բայրոնին: Սույն համարում Բայրոնի մահվան 150-ամյակի առթիվ ամսագրում լույս է տեսել մի անստորագիր հոդված (հայե-

³⁹ Տե՛ս, օրինակ, Լորդ Բայրոն, *Մանֆրեդ* (թարգմ. **Յովհաննես Մասեհյան**, Վիեննա, 1922, **Բայրոն**, *Երկերի ժողովածու*, Ե., 1963, էջ 425-476):

⁴⁰ Տե՛ս, օրինակ, Որբերեան Ռ., *Լորտ Պայրըն* (Բազմավեպ, 1932, N 6-7, էջ 268-270):

⁴¹ **Անդրե Մորուս**, *Դոն Ժուան կամ Բայրոնի կյանքը* (թարգմ. **Աբրահամ Մելիքյան**, Ե., 1980, էջ 328):

⁴² **Բայրոն**, *Երկերի ժողովածու*, էջ 463:

րեն և անգլերեն)⁴³, որտեղ խոսվում է բանաստեղծի Մխիթարյան հայրերին այցելելու մասին, ինչպես նաև բերվում են հատվածներ նրա *Հայերեն-անգլերեն քերականության* ձեռնարկի համար գրված առաջաբանից:

Հնդհանրացնելով մեր ուսումնասիրության արդյունքները՝ վստահորեն կարող ենք պնդել, որ Մխիթարյաններն իրենց հրատարակություններում եվրոպացի գրողներից ամենից շատ անդրադարձել են Բայրոնին: Դա միանգամայն բնական է, հասկանալի և արդարացուցիչ, քանի որ, նախ, եվրոպացի գրողներից ինքը՝ Բայրոնն է ամենից շատ անձնական առնչություն ունեցել Մխիթարյանների հետ, հիացել նրանց ազգանվեր աշխատանքով, ինչպես նաև ուսումնասիրել հայոց լեզուն ու հայ մշակույթը, և երկրորդ, ինչպես իր գրույցներում, դրվատանքով խոսելով Բայրոնի մասին, նշում է իր փառքի գագաթնակետին հասած և Բայրոնի հախուռն քնարերգությամբ ոգևորված գերմանացի մեծ բանաստեղծ Գյոթեն. «Նա մեծ տաղանդ է: Իմ կարծիքով ոչ ոք չունի բանաստեղծական այն ուժը, ինչպիսին որ նա ունի: Արտաքին աշխարհը ճշմարիտ ընկալելու, անցյալը պարզորոշ թափանցելու իր կարողությամբ նա մեծ է, ինչպես Շեքսպիրը»⁴⁴:

ПРОИЗВЕДЕНИЯ ДЖ. Г. БАЙРОНА НА СТРАНИЦАХ ИЗДАНИЙ ВЕНЕЦИАНСКИХ МХИТАРИСТОВ

БЕКАРЯН А. А.

Резюме

Венецианские Мхитаристы одни из первых стали публиковать армянские переводы произведений Байрона, что было весьма закономерно. Великий английский поэт высоко ценил армянскую культуру. В 1816-1817 гг. в венецианском арменоведческом центре – в Престольном монастыре св. Лазаря Байрон изучал армянский язык и занимался совместными с Мхитаристами научными изысканиями. Творчество Байрона широко было представлено в отдельных изданиях и сборниках Мхитаристов. На страницах издаваемых Мхитаристами журналов “Базмавеп”, “Гехуни” и “Хай ынтаник” публиковались многие произведения Байрона, а также литературно-критические статьи о нем.

⁴³ Լորտ Պայրըն եւ Մխիթարեան հայրերը. բանաստեղծին մահուան 150ամեակին առիթով (1824-1974) - *Byron and the Mekhitarist Fathers: on the 150th Anniversary of his Death (1824-1974)* (Հայ ընտանիք, 1974, N 11-12, էջ 6-7):

⁴⁴ Էքերման, *Ջրույցներ Գյոթեի հետ. նրա կյանքի վերջին տարիներին (1823-1832, Ե., 1975, էջ 118)*: